ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՐԱՆԻ

ՊԵՂՈՒՆԴ ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԱՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ

ՀԱՍՑԵ ՏՊԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՐԱՆԻ

ՀԱՍՑԵ ՏՊԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՊԵՂՈՒՆԴ ՀԱՅԿԱԿԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՐԱՆԻ

ՀԱՍՑԵ ՏՊԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԱՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ

ՀԱՍՑԵ ՏՊԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԱՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ

ՀԱՍՑԵ ՏՊԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵ

ԴՎՑՈՒՃԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայկական ՍՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության որոշմամբ Հայկական ՍՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանը գումարվում է 1938 թվականի հոկտեմբերի 30-ին։

Հայկական ՍՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանի օրակարգը հաստատվում է հետևյալ կերպ.

1. Հայկական ՍՍՀ 1939 թվականի պետական բյուջեի մասին։
2. Հայկական ՍՍՀ 1939 թվականի պետական պարտքային գրքերի մասին։
3. Հայկական ՍՍՀ Գերագույն դատարանի ընտրության մասին։
4. Հայկական ՍՍՀ դատախազի ընտրության մասին։

Հայկական ՍՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նստաշրջանի օրակարգի հարցերի քննարկման մասին որոշումները կընդունվեն Հայկական ՍՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանի ընդհանուր նիստերում։

Հայկական ՍՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանի օրակարգի հարցերի քննարկման մասին զեկուցումներ կանեն Հայկական ՍՍՀ ֆինանսների ժողկոմ ընկեր Ա. Ա. Ղազարյանը և Հայկական ՍՍՀ արդարադատության ժողկոմ ընկեր Ա. Ա. Ղուկասյանը։

Հայկական ՍՍՀ Գերագույն Խորհրդի

որմէ պիտի սաանան թէ ուսուցիչք և թէ ուսանողք իրենց հարկաւոր նիւթեր, եթէ ուսումնարանի մի աչք համարինք ուսուցիչ, կարծեմ որ մի աչքն ևս գրագարան պիտի լինի. կարսի ուսումնարան այս վերջն աչքն բոլորովին զուրկ էր: Ուստի նորա այժմու դպրոցասէր առաջնորդ գեր. Գրիգորիս վ. Աղուանեան ձեռք զարկաւ ուսումնարանի այս ամենակարևոր պէտք լցուցանելու, սահմանելով որ ոչ միայն գպրոց, այլ բոլոր քաղաքն անդամ գիրքերէ զուրկ է: Մի հրաւիրագրով դիմեց համազգայնոց և յիրաւի, որ շնորհակալութեան արժանի նպաստներ ընդունեցաւ նոցանից. մանաւանդ Տփխոյենցներից: Ազգայնոց այս նպաստ յառիժացնելու և ձոխացուցանելու համար, նա խորհեցաւ այդ գրագարանին մի ընկերութիւն կազմել. որ զայն պահպանէ, ընդարձակէ և ուսումն ու ընթերցանութիւն ծաւալէ ժողովրդի բոլոր դասակարգի մէջ, որ բոլորովին զուրկ են ընթերցանութեան միջոցներից: Վասն որոյ կազմուեցի՛ ընկերութեան համար նա առանձին մի կանոն խմբագրելով, իւր յատուկ հաւատարմութեամբ և ժողովրդասիրութեամբ կարսեցի և օտարաքաղաքացի քանի մը ուսեալ և խելահաս երիտասարդներ հրաւիրեց իւր խմբագրած կանոնադրին դիտողութիւն անելու և կատարել տալու, քանի մի նիստեր անելով՝ տաք տաք վիճաբանութիւններէ զինի, վերջապէս կանոնագրութիւն մը ձևացաւ, որով գեր. Հայրսուրբ հրաւէր կարդաց երիտասարդաց փութալ անդամ գրուելու գրագարանի ընկերութեան, մի աւուր մէջ անդամագրութիւ քսանմէկի հասնելով, հետևեալ օրը յունվար 21-ին ընդհանուր ժողով կազմեցին ընդ նախագահութեամբ գեր. առաջնորդին, որ նորա ազդու ու քաջալերիչ իրատներ լսելէ ետք, ընդհանուր ժողովոյ պիւան և գործավար խորհուրդ անունով յանձնաժողով մը ընտրեցին ընկերութեան գործեր տնօրինելու համար:

Կը յուսամ որ նորընտրի դիւանը կը փութայ կանոնագրութիւնը և բոլոր գործեր սկզբէն մինչև վերջ նկարագրելով հետզհետէ ձեզ խրկել:

Ինչպէս որ գեր. Աղուանեանի ընորհիւ Վանայ և Մուշի մէջ զգայուններ արթնացան դէպի ազգ, դէպի ուսումն, միով բանիւ դէպի իրենց բարին, շատ յուսալի է որ կարսի մէջն ալ նոյն պիտի լինի, և առաւել ևս, զի կարսեցւոց այժմու նիւթական վիճակ փոքր ինչ միւթարական է քան զառաջնոց, մանաւանդ որ գեր. Աղուանեան ամենայն անձնանուիրութեամբ հանապազ իրենց յառաջադիմութիւն կը խորհի, կը ջանայ և կաշխատի իբրև մշակ իւր հայրենիքի և Հայ ազգի:

Խաչատուր Գարբինեան.

(ԱԽԱՂՑԽԱՑԻՑ)

ԳԱՋԵԹԱԶԻ ԱՂԲԱՐ

—

Շատ վախտ գըլլի կը որ հրամանքիդ հետ զօնուշիդ չեմ եղեր, սէպէպը, էֆէնտիմ, իսկ օրթլաղի ղալմաղալներն էին:—Բէյլքի հրամանքդ քըդալ լսած գըլլես, որ երկու երեք տարի է մեր թարաքները զաւզալ կար, մեր տէրութէնն ու Օսմանկան իրարու հետ կռիւ կէնէին: Գազէթաձի աղբար, ստուած գիւշմնիս ցույց չտայ ադ օրերը, էրթան, մեմա յետ չդառնան:—Էֆէնտիմ ոչ կերածներս դիդէինք, ոչ խմածներս էրէսնիս շանար, գահա մէկալ թարաքից չէշեդ չէշեդ ծախսերուս շանալն, գահա մէկալ թարաքէն իսկ մեր ջահիլ ջուհիլներուն չուփիկ էլլելներս, փարան ջրի պէս խարջնելներս, ալ ո՞ր մէկը ըսեմ, գազէթաչէ աղբար:—Աղբար մեր քաղքին մէջ անպէս մարդիկ կան որ մեծուկանց ըսածին պէս, տունը չունի հաց ապուր, դուսը կէնէ էքսպուռա, գործերուն, առուտուրներուն կաշես, վրաներուն դլխներուն կաշես, բռնած գործէրուն կաշես, շաշմես մէթ կըճնաս, թիւքիւրուկդ չորնայ կը:—Մեր մեղացէն առաջուենան էսնէֆական կարգ ու կանոնն ալ վերցաւ, որ մարդ հիմի ջահիլներուն քիչ մը չուփիի տակ բերէ, եօլսուզ էնէլ չկայ, փալախայ զարնել չկայ, եօլ երքէն չկայ, հէրքէշ իրեն ուզածը կէնէ: Անցածները 5—10 ուսօտաբաշի թօփ էղանք գնացինք մեր գալավային քովը, ըսինք ջանմ իսկ մեր էնէֆուենան կարգ ու կանոնը ձիդ, իսոր մ էլ ճանապարհ մը, ցեխավոյ փուալենի կըսեն, ի՞նչ կըսեն, իսկ մեր քաղաքն ալ բացէ՛ք, աշենք ինչը գըլլի: Ան ադան բռնեց մեղի թօփ էրաւ, թէ իսկ իսկ ծախսերը գլլին, ըրաղի՞ էք, մենք ալ որքս կա ըսինք, որս չէ ըսինք պոչից, ճչից, ալ չեդեմ թէ որը—որոց էղաւ, թէհմենօք գուբերնաթին գէր է կըսին:- Աղբար մուխը մարի հիմիկուան ժամանակն ալ առանց փարի բան չի ըլլի, ինչ բան որ բանալու կըսես, քանի մը հազար մանէթ նոր ծախսի դուռ կը բացուի, ըսը առաջուան վախթը հազար անգամ աւ չէր, որ շէհսուսթաճին ալ առանց փողի, ուստաբաշին ալ, ոնչ գիր կար, ոչ դէվթէր, իմ շատ լաւ միաքս կուգայ էրզէրում մի էրքէմ կէնէինք, 5...10 գործը մէկէն վերջացնէինք մը գիտի՞ս, գազէթաչէի աղբար, էրքէնին կապածը կապած էր, քակածը քակած:—

Էրձբ, ձեր թարաքները- հանէֆ օլանը ինչ կարգ սա կանոններ ունի, գազէթաչի աղբար, արևուդ սադաղայ մէմ ինձի գրէ իմանամ:

Ուտուդ ունիմ որ ատոնց յետև կենա հրամանքիդ հետ գրութին էնիմ, մեր քալքի խապարներէն իմաց տամ, ատոր համար աս անդամ ասքանս հէրիք է, ճնաս բարով:—

Ջէնիաթքէր:—

Ասսիա.

ՆԵՐՔԻՆ

ԹԻՖԼԻԶԻ ԻՐԱՒԱՍՈՒՆԵՐԻ ՆԻՍՏԵՐԸ:
փետրվարի 11 1879.

—

Պ. Անտոն Սողոմոնեան Ղորղանեանցի քաղաքագլխի պաշտօնը յանձն չառնելու պատճառով, այսօր իրաւասուները հրաւիրուած էին նորից ընտրութիւն անելու քաղաքագլխի:

Ներկայ գտնուեցան 56 իրաւասուներ, չնայելով որ այդ օրը բարեկենդանի վերջին օրն էր: Նախագահութիւն էր անում նախկին քաղաքագլուխ պ. Պիպիանին, որը յայտնեց թէ այսօրուան նիստը պիտի նուիրուի միայն քաղաքագլուխ ընտրելու գործին:

Պ. Լ. Կ. Էլմիրզեանցը ասաց, որ հարկաւոր է ընտրութիւնը յետաձգել, որ այդ միջոցում բոլոր իրաւասուները մանուածապատկեն մի ժողով, ուր և բազմակողմանի խորհրդակցուի այս գործի մասին:

Նախագահը պատասխանեց, որ կանոնով ինքը չի կարող մի այդպիսի մանուածոյ ժողով կազմել, իսկ եթէ իրաւասուները կամենում են, ոչ ոք չի արգելը նոցա այդ անելու:

Յետոյ խօսուեց ընտրութիւնների յետաձգելու մասին և ժողովը բազմութեամբ ձայների ժխտեց քաղաքագլխի ընտրութիւնը յետաձգել: Բայց թէ ինչ նպատակով և մինչև երբ, դորա մասին եղան երկար-բարակ վիճաբանութիւններ:

Կային այնպիսիք՝ այն է պ. պ. Նիկոլաձէն, Չելականվը և Սունդուկեանցը, որոնք կարծում էին քաղաքագլխի ընտրութիւնից առաջ քննել քաղաքիս վարչութեան համար կազմած նոր շտատը և կազմակերպել վարչական մասը նպատակայարմար կերպով: Եւ այս գործը կամենում էին սոքա որ կատարուի ժողովի հենց առաջիկայ նիստից սկսուած և երբ այս գործը բոլորովին կարգադրուի, այնուհետև արդէն ընտրել նոր քաղաքագլուխ:

Կային և այնպիսիք՝ այն է պ. Ամբրեանցը, Եւանդուկեանցը, Ամատունին և Խարազեանցը, որոնք մասնաւորութիւնների մէջ միայն դանազանուելով, առաջարկում էին նախ ընտրել քաղաքագլուխ և դորա համար նշանակել մի շաբաթ կամ մի ամիս ժամանակամիջոց նորից խորհրդակցութիւններ անելու դորա մասին և յետոյ, երբ որ ընտրուի նոր քաղաքագլուխը, այն ժամանակը միայն կազմակերպուի վարչութիւնը և նորա ներկայացութեամբ անուին հարկաւոր փոփոխութիւնները շտատի մէջ:

Պ. Նախագահը առաջարկեց ժողովին յայտնել վճիռը յայտնած կարծիքների մասին տեղերից վերկնալով:

Ժողովը չկարողացաւ առաւելութիւն ձայների յայտնել ոչ առաջին խմբի կարծիքի մասին և ոչ երկրորդ խմբի ցանկացածի համար:

Պ. Նախագահը, տեսնելով որ վճիռ չէ կայանում նոր քաղաքագլխի ընտրութեան ժամանակամիջոցի մասին, յայտնեց ժողովին, որ ինքը նախընտրում է պ. իրաւասուներին հաւաքուել ապագայ կիրակի օրը քաղաքագլուխ ընտրելու համար:

ԿԱՂԱՒԱԿԱՆ

Голосъ լրագրի թղթակիցը կ. Պօլսից գրում է. Շաբաթ 25 յունվարի Ագրիանուպօլսի Հայոց եպիսկոպոս Գէորգը, ուղեկցութեամբ վարդապետաց և գաւառական ժողովի նախագահների ներկայանում է Ռուսաց գլխաւոր հրամանատար գեներալ Տօլեբէկինին, որ սրան յանձնէ Ագրիանուպօլսի Հայերի տպերազդերը յանուն թագաւոր կայսեր Ռուսաց: Այս այցելութեան առանձին նշանակութիւն տուեց Ագրիանուպօլսի Ցունաց մետրապօլսի գործակատարութեան եղանակը:—Պատիւ ունեմ Ձերդ բարձր գերազանցութեան, ասաց Հայ եպիսկոպոսը — յանձնելու ուղերձն որով Ագրիանուպօլսի Հայ հասարակութիւնը ցոյց է տալիս իւր յարգանաց զգացմունքը ձեր օգոստափառ թագաւորին և յայտնում է, պ. գլխաւոր, մեր շնորհակալութիւնը ձեզ իբրև նորա արժանաւոր ներկայացուցչին: Ընդունեցէ՛ք այս ուղերձն իբրև ճշգրիտ արտայայտիչ այն զգացմանց, որ իրանց սրտի խորքում կրում են մեր Ագրիանուպօլսի հայերի տպերազդերը յանուն թագաւոր կայսեր Ռուսաց: Ա յս այցելութեան առանձին նշանակութիւն տուեց Ագրիանուպօլսի Ցունաց մետրապօլսի գործակատարութեան եղանակը:—Պատիւ ունեմ Ձերդ բարձր գերազանցութեան, ասաց հայ եպիսկոպոսը — յանձնելու ուղերձն որով Ագրիանուպօլսի

թեան թագաւոր կայսեր Համակրութեան և պաշտպանութեան վերայ, և մենք այժմ, պ. գեներալ, յայտնում ենք մեր երախտագիտութիւնն, որ զարթեցնում է մեր մէջ օգոստափառ թագաւորն և ձեր մեծ երկիրը: Ձեր խօսքերն այնպէս ազդեցին ինձ վերայ, որ ես պատուական պարտք կհամարեմ, եթէ ձեր բարձր գերազանցութիւնը կհամաձայնի, հազորդելու ձեր խօսքերը մեր հօրը, կ. Պօլսի սրբազան պատրիարքին:

— Համաձայն եմ, ասաց գեներալը: Մի և նոյն ժամանակ նախազգուշացրէք նորին Բարձր Սրբազնութեան, որ նա ամեն անգամ երբ հարկաւոր կհամարէ, դառնայ դէպի մեր դեսպանը կ. Պօլսում՝ իշխան Լոբանով—Ռոստովսկին, որ նոյնպէս սիրում է և պաշտպանում հայերին»:

Հայերի ուղերձը հակապատկերն է ցոնաց մետրոպոլիտ Դիոնիսիոսի գանգատների, ուստի և ես ծանօթացնելով ձեզ բարձրաստիճան եկեղեցականի խարդախութիւնը, պարտք համարեցի մանրամասնաբար նկարագրելու Հայոց Գէորգ եպիսկոպոսի տեսակցութիւնը գեներալ Տոլեբեկի հետ:

Turquie լրագիրը հաղորդում է, որ պատգամաւորք Հայ եկեղեցական և մեծամեծների դասերից ներկայացան մեծ վեզիրին: Նոքա յարգանօք յայտնեցին, թէ որովհետև կայսերական կառավարութիւնը ոչ մի որոշումն չարաւ պատրիարքի հրաժարման վերաբերութեամբ, ուստի և հասարակութեան գործերը անկարգութեան մէջ են և աւելի վատթարանում են այն վշտալից լուրերով, որոնք հասնում են Հայաստանի նահանգներից: Մեծ վեզիրը հանգստացրեց պատգամաւորներուն յայտնելով, որ նոր խառն յանձնաժողովն, որ կկազմվի հայերից և մահմետականներից, կկարկվի կարևոր տեղերն և որ կառավարութիւնը ձեռք է առնում կարևոր միջոցներ, որպէս զի բոլոր օսմանեան հպատակները վայելեն իրաւանց կատարեալ հաւասարութիւն. ի վերջոյ մեծ վեզիրը յայտնեց ցանկութիւն, որ ներսէս պատրիարքը յետ առնու իւր հրաժարականն և գնայ Բարձրագոյն Դուռը, բանակցելու նորա և խառն յանձնաժողովի հետ, որ կկրկվի Հայաստան:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Վերջին կառավարչական տեղեկութիւնք չումայի երևեցած տեղերից մխիթարական են, որովհետև այն տեղերում էրբև հետևանք գործադրած խիստ միջոցների, հիւանդութիւնը նուազել է և հիւանդացողներ հազիւ են պատահում:

—

Ծերունի բժիշկ կոմս Խոտոմսկին, որ ֆրանսիական զօրաց բժիշկ էր Նապոլեոն առաջինի ժամանակ և յետոյ Լեհաց զօրաց ու ինքը չատ փորձառու, ասում է, որ ժանտախտի (չումայի) դէմ ամենալաւ միջոցն է մարմնին կտուաւի ձէթ քսելն, որովհետև նկատած է, որ այդ ձէթը ծախողները բնաւ հիւանդացած չեն չումայով: Նա խորհուրդ է տալիս մինչև անգամ հիւանդութեան ժամանակ ապիտակեղէնը այդ ձէթով թրջել:

—

«C. Her. Bëd.» լրագիրն № 31-ում հրատարակած էր Թղթակցութիւն Թեֆլիսից, տեղական մամուլի մասին: Ինչպէս երևում է մայրաքաղաքի խմբագրութիւնք այնքան անծանօթ են կովկասի և սորա մամուլի հետ, որ ամենայն թղթակցութիւն, ինչ սնալ տեղեկութիւնք և հայհոյուածքներ էլ բովանդակելիս լինեն այն, հրատարակում են, առանց նկատողութեան իրանց կողմից: Սոյնպիսիներից մէկն է և վերոյիշեալ թղթակցութիւնը, որոյ մասին կը խօսնք մի այլ անգամ:

—

Աֆղանիստանի էմիր Շիր-Ալին ծանր հիւանդ է, այնպէս, որ նորա առողջանալուն յոյս չը կայ:

—

Մեզ հաղորդում են, որ հայր կոստանդին Տէր Ստեփանեանցը մեծ եռանդ և տոկունութիւն է ցոյց տալիս Բաթումի հայ եկեղեցւոյ չինութեան համար և ոչնչից, կարծես, ինչ է դուացնում՝ աշխատելով գլուխ բերելու եկեղեցւոյ չինութիւնը: Ցնծք տարակուսում, որ հայր կոստանդինի եռանդը կը պսակէ գործը յաջող վերջաւորութեամբ:

—

Ամսոյս 14-ին Տեառընդառաջի օրը Սրբազան Առաջնորդն և Ներսիսեան դպրոցի վարչութիւնը մեծ փառաւորութեամբ կատարեցին երջանկայիշատակ Ներսէս Ե. Կաթողիկոսի հոգեհանգիստը: Առաջնորդն պատարագիչ էր և գլուխ Թիֆլիզի բոլոր քահանայք ներկայ էին հանդիսին: Սրբազան Առաջնորդը յարմարաւոր քարող ասաց, յիշելով հանգուցեալ ազգասէր, հայրենասէր պաշտպան Ներսէս կաթողիկոսի ազգին և եկեղեցուն արած ծառայութիւնների և նորա արժանաւորութիւնքը: Ապա օրհնեց ամենին մաղթելով, որ Ներսեսի ոգին հանդչի ամենքի վերայ:

Ներկայ եղող ժողովրդոց բազմութիւնը ցոյց էր տալիս, թէ որքան մեծ է Ներսիսի յիշատակը հայ ժողովրդեան մէջ, որովհետև ոչ միայն եկեղեցում, ուր ասել գրելու տեղ չը կար, այլ և նորա բակում մեծ բազմութիւն հաւաքված էր: Հայ ժողովուրդը, մանաւանդ սորին դասը գիտէ իւր արժանաւոր կաթողիկոսի յիշատակը յարգել: Պէտք է նկատել, որ բարձր դասի ժողովրդականներից քիչ էին, որ ապացուցանում է նորա անտարբերութիւնը ղէպի ազգային հանդէսները:

—

Երևանից գրում են՝ Սուրբ Գայիանեան Երևանայ օրիորդաց հայ դպրոցը բաւական կարգաւորուած է, իշխորհս օրիորդ եղիսաբէթ Ալիխանեանցի, որ վարժուհի և ուսուցչուհի է այնտեղ: Ցնծք կարող չը գովել օրիորդի և միւս պաշտօնների բարեխղճութեամբ կատարելը: Թէ թատրոնական և թէ ուսումնարանական գործերի կարգաւորութիւնը արդիւնք են տևսուչ հայր Մկրտիչի արթուն և անխոնջ գործունէութեան:

—

Պարոն *** Ալէքսանդրօպոլից հաղորդում է հետևեալ լուրերը՝

Այստեղ Մխիթար քահանայ Տէր Պետրոսեանցն և պ. Հայկ Մատակեանցի ընծրին և աշխատութեամբ հրահանգվել է բաւականին գումար յօգուտ «Դպրոցասիրաց ընկերութեան» որ չատով պիտի ուղարկվի Խմբագրութեանդ՝ անդը հաղորդելու: Մատուցանում ենք յիշեալ անձանց մեր խորին շնորհակալութիւն իրանց գովելի եռանդին համար:

—

Ամսոյս 8-ին ռուսերան փառաւորութեամբ կատարվեցան այսեղ արբոց վարդանանց տօնը: Պատարագին երգում էին աշակերտք և աշակերտուհիք: Եկեղեցւոյ մէջ բազմութիւնը չատ էր, չնայելով վատ եղանակին: Բարեչնորհ յաջորդը համառօտ քարոզ ասաց, որի մէջ յայտնեց, որ հոգաբարձուաց հետ վճռել են վիճակային դպրոցի չինութեան համար կարևոր եղած հոգսերն անել և խնդրեց, որ մօտիկ միջոցում այս առթիւ կազմվելի ժողովին ներկայ լինին հարկաւոր կարգադրութիւնների անելու համար: Երկու ուսուցիչ և մի աշակերտուհի ճառեր կարդացին: Երգվեցան «Նորահրաչ» չարականը և ուրիշ պատշաճաւոր երգեր: Եկեղեցւոյ եղանք յուսակտուր բերկրութեամբ և բաւականութեամբ:

Երևանից մեզ հաղորդում են, որ այնտեղ չարունակարար ներկայացումներ են լինում, յաջող և անյաջող: Բայց այնպիսի մի ներկայացում, որպիսին փետրվարի 3-ին էր, դեռ քիչ է պատահել Երևանում: Այդ օրը ներկայացնում էին սիրողների մի խումբ պ. Բարխուդարեանի «Սէր կամ մահ» ողբերգութիւնը: Դերասանուհիների մէջ մանաւանդ գովութեան արժանի էր աչքոյժ օրիորդ Փանոճեանը, որ իւր խաղով զերազանցեց ամենին: Ցանկալի կը լինէր, որ նորահաս օրիորդը չարունակէր իւր լծածին քանքարը աճեցնելու, որով ժամանակին, ինչպէս խոստանում են իւր խաղերը, կը լինի հայ բեմի զարդը:

Եթէ տէր տնչնան մի քանի այդպիսի ներկայացումներ, Երևանցիք սահմված կը լինէին թատրոնը մեծացնել:

—

Մեզ գրում են, որ Երևանում կազմված են 3 — 4 թատրոնական խմբեր, որոնք և տալիս են ներկայացումներ: Երանի թէ, այդ խմբերը միանային և մի կանոնաւոր ու զօրեղ խումբ կազմէին, որով աւելի նպատակ կը լինէին թատրոնական գործին. Այդ խմբերի մէջ կան այնպիսի զարգացած երիտասարդներ, որոնցից կարելի է մի «Թարգմանական ընկերութիւն» կազմել, որ այնքան անհրաժեշտ է մեր աղքատիկ բեմական բեկերտուարը հարստացնելու համար:

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՆՃԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՉՈՒԹԻՒՆ, Ր. ՇԱՀՎԵՐԴԵԱՆՑ

ԹԻՖԼԻԶՈՒՄ

Գոլովինսկի պրոսպեկտ. տուն Մկրտմանեանցի № 8 (Օկրուժնոյ սուդի տակ. «Սուլտան» մագազինում):

1879 թ. յունվարի մէկին Թիֆլիզում հաստատվեցաւ

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ ՈՒԹԻՒՆԸ Ր. ՇԱՀՎԵՐԴԵԱՆՑ

Այս հաստատութեան նպատակն է հասարակութեան անդամներին հեշտ միջոց տալ ստորագրվելու որ և է լրագրի՝ խմբագրութեան գներով և հեշտացնելու լրագիրների մէջ մասնաւոր յայտարարութիւններ հրատարակելը, նոյնպէս խմբագրութեանց գներով: Գործակալութիւնը յանձն է առնում հրատարակելու յայտարարութիւնն այն լրագիրներում, որոնց մէջ ցանկանայ տուողը և նոցա թարգմանութիւնը ռաերէն, տեղական կամ օտար լեզուներով առանց վարձի անելու:

Եթէ ստորագրվողը կամ յայտարարութիւն տուողը կը կամենայ խմբագրութեան անդորրագիրն ունենալ, գործակալութիւնը յանձն է առնում կատարելու այս պահանջն էլ:

Բայի սրանից խմբագրութեան մէջ կ'վաճառվին համարները բոլոր տեղական լրագիրների և մայրաքաղաքների մի քանի հրատարակութեանց:

Գործակալութիւնը առանց յետաձգութեան կ'կատարէր ամեն յանձնարարութիւն շուտով և ճշտութեամբ:

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է կամաց 8էր Թաւթեանցի Русское слово—նոր գաղափիր ռուսներէն լեզուի հայ դպրոցների համար, երկրորդ տպագրութիւն նորանոր յօդուածներով և փոփոխութիւններով լրացրած: Այժ գիրքը հաճութեամբ պ. թումեան վիրաւորեալ ընդունած է վրացեանի և Իմերեթի վիճակի Հայոց բոլոր միջնակարգ և ծխական ուսումնարաններում: Սա ընդունված է նոյնպէս Կովկասի և միւս Թեմերի ուսումնարաններից շատերում: Վաճառվում է Թիֆլիզում բոլոր գրավաճառանոցներում, կարող են ստանալ և աշխատասիրողից պ. Աբովեանցների խանութում Միխայէլովսկու կամուրջի վերայ. գինն է 40 կոպէկ: Ճանապարհի ծախսը առնողների վրայ է:

Գումարով առնողներին ծանրջնորհն կընկնի, եթէ գիմեն ուղղակի աշխատասիրողին հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Камсару Теръ Давидіянцъ. Въ Магазинѣ Бр. Абовьянцъ. На Михайловскомъ мосту.

Поступило въ продажу книга.

Шаракантъ (Շարական)

Богослужебніе каноны и пѣсни армянской восточной церкви, переводъ съ древно-армянскаго языка Н. Эмина.

Москва. 1879 г. Цѣна съ пересылкою 3 р. 50 к.

Выписывать можно отъ переводчика, живущаго въ Москвѣ, близъ Красныхъ Воротъ, домъ Фиметиса.

ԿՈՎԿԱՍԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄԸ ՉԱՓ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

վաճառվում են 'ի միջի այլոց և հետևեալ գրերը՝

1. Ներսէս հիւպերորդ աշտարակցի կաթուղիկոսի կենսագրութիւնը, ժողովեաց Ղ. Երիցեանց. չատոր ա 30 կ.
2 . . . . . նոյնը հատոր. բ 40 կ.
3. . . . . գ 30 կ.
4. Մերդաբեկեանց—Գօշ Մխիթարի, Ողիմպիանոսի և Եղոպոսի առակները. . . . 1 ռ.
Վիշապաղան—Ռընկ . . . 40 կ.
6 Յարոյ—Հայոց ժամուլը . . . 30 կ
7 Տէր Աստուածատրեանց-Վ. Հօրնի անապատում 30 կ.
8 Առաքելեանց Հաւատարմութիւնը ամէն արգելքներին յաղթում . . . 40 կ.
9 . . . . . խաւարից դէպի լոյս. . . .40 կ.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 17-го ФЕВРАЛЯ 1879 г. Типографія Амб. Энфіаджянцъ и К- Տուն Բժշկապետ Մ. Ռոտինեանցի